

3321


Ի. Ս Ա Լ Ի Ն

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ
ՈՌԻՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ
ՏԱԿՏԻԿԱՆ



3K33
3 - 75

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938



Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՍԱԼԻ 24 JUN 2005

Դ-75

Կ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ

«Հոկտեմբերի ուղիմերում» զրքի առաջարանը

ՊԵՏՀՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ ● 1938

05.08.2013

3321

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱՆԵՐԻ
ՏԱԿՏԻԿԱՆ

«Հոկտեմբերի ուղիներում» գրքի առաջաբանը



И. СТАЛИН
ОКТЯБРЬСКАЯ РЕВОЛЮЦИЯ И
ТАКТИКА РУССКИХ КОММУНИСТОВ

Армгиз—Издательство
политической литературы
Ереван, 1938

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ
ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

Արտաքին կարգի յերեք հանդամանքներ վորոշեցին
այն համեմատական հեշտությունը, վորով պրոլետա-
րական հեղափոխությանը Ռուսաստանում հաջողվեց
փշրել իմպերիալիզմի շղթաները և, այդպիսով, տա-
պալել բուրժուազիայի իշխանությունը:

Նախ՝ այն հանդամանքը, վոր Հոկտեմբերյան
հեղափոխությունն սկսվեց յերկու հիմնական իմպերիա-
լիստական խմբերի՝ անդու-Փրանսական և ավստրո-
գերմանական խմբերի կատաղի կովկի ժամանակաշրջա-
նում, յերբ այդ խմբերը, զրադված լինելով իրար դեմ
մահացու կոփկ մղելով, վո՞չ ժամանակ ունեցին, վո՞չ
ել միջոցներ՝ լուրջ ուշադրություն նվիրելու Հոկտեմ-
բերյան հեղափոխության դեմ պայքարելուն։ Այս հան-
դամանքը հսկայական նշանակություն ունեցավ Հոկ-

սեմբերյան հեղափոխության համար, վորովհետև նա
այդ հեղափոխությանը հնարավորություն տվեց ող-
տագործելու դաժան ընդհարումներն իմպերիալիզմի
ներսում՝ իր ուժերն ամրացնելու և կաղմակերպելու
համար:

Յերկրորդ՝ այն հանդամանքը, վոր Հոկտեմբե-
րյան հեղափոխությունն սկսվեց իմպերիալիստական
պատերազմի ընթացքում, յերբ պատերազմից տաճ-
ված ու հաշտության ծարավի աշխատավոր մասսանե-
րին իրերի բուն իսկ տրամարանությունը մոտեցրել էր
պրոլետարական հեղափոխությանը, վորպես պատե-
րազմից դուրս դալու միակ յելքի։ Այս հանդամանքն
ամենալուրջ նշանակություն ունեցավ Հոկտեմբերյան
հեղափոխության համար, վորովհետև նրա ձեռքը հաշ-
տության հուժկու գործիք տվեց, նրա համար հեծ-
տացրեց խորհրդային հեղաշրջումն ատելի պատերազ-
մի վախճանի հետ միացնելու հնարավորությունը և,
դրա չնորհիլ, նրա համար ստեղծեց մասսայական
համակրանք ինչպես Արեմուտքում՝ բանվորների մեջ,
այնպես ել Արեմէլքում՝ ճնշված ժողովուրդների մեջ։

Յերրորդ՝ բանվորական հուժկու շարժման առ-
կայությունը Յելբոպայում և հեղափոխական ճգնա-
ժամի հասունանալու փաստն Արեմուտքում ու Արեել-
քում, ճգնաժամ, վոր ստեղծել եր իմպերիալիստական
յերկարատև պատերազմը։ Այս հանդամանքն անդնահա-
տելի նշանակություն ունեցավ հեղափոխության հա-
մար Ռուսաստանում, վորովհետև նա Ռուսաստանից
դուրս հավատարիմ դաշնակիցներ առաջավեց հեղա-
փոխության համար՝ համաշխարհային իմպերիալիզմի
դեմ ուղղված նրա պայքարում։

Բայց, բացի արտաքին կարգի հանդամանքներից,
Հոկտեմբերյան հեղափոխությունն ուներ ելի մի ամ-
բողջ շարք ներքին բարենպաստ պայմաններ, վորոնք
հեշտացրին նրա համար հաղթությունը։

Այդ պայմաններից դվիսավորները պետք եւ համա-
րել հետեւյալները։

Նախ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունն իր կող-
մում ուներ Ռուսաստանի բանվոր գասակարգի հոկա-
յական մեծամասնության ամենաակտիվ աջակցությու-
նը։

Յերկրորդ՝ նա վայելում եր անտարակուսելի
աջակցությունը գյուղացիական չքավորության ու դին-
վորների մեծամասնության, վորոնք ծարավի ելին
հաշտության ու հողի։

Յերրորդ՝ նրա գլուխ եր անցած, վորպես ղեկա-
վար ուժ, մի այնպիսի փորձված կուսակցություն,
ինչպիսին բոլշևիկների կուսակցությունն ե, վորն
ուժեղ և վո'չ միայն իր փորձով ու տարիներով մշակ-
ված կարգապահությամբ, այլև աշխատավորական
մասսաների հետ ունեցած ահազին կապերով։

Չորրորդ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունն իր
առջև ուներ այնպիսի համեմատաբար հեշտ հաղթա-
հարելի թիամբիներ, ինչպես են՝ ավելի կամ պակաս
չափով թույլ ուսւական բուրգուազիան, գյուղացիա-
կան «քունտերից» վերջնականապես բարոյալքված՝
կարվածատերերի դասակարգը և պատերազմի ընթաց-
քում բոլորովին սնանկացած համաձայնողական կու-
սակցությունները (մենչելիների ու եսերների կու-
սակցությունները)։

Հինգերորդ՝ նա իր տրամադրության տակ ուներ

յերիտասարդ՝ պետության ահազին տարածությունները, վորտեղ կարող եր աղատորեն մանելը և, նահանջել, յերբ իրադրությունն այդ եր պահանջում, դադար առնել, ուժերը հավաքել և այն:

Վեցերորդ՝ հակածեղափոխության դեմ մղած իր պայքարում Հոկտեմբերյան հեղափոխությունը կարող եր հուսալ, վոր յերկրի ներսում առկա յեն բավարար քանակով պարենավորման, վառելիքի ու հումքի ռեսուլտաներ:

Այս արտաքին ու ներքին հանգամանքների գուշակցությունն ստեղծեց այն յուրահատուկ իրադրությունը, վորը վորոշեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթության համեմատական հեշտությունը:

Այս չի նշանակում, իհարկե, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը չուներ իր մինուսները՝ արտաքին ու ներքին իրադրության իմաստով։ Ի՞նչ արժի, որինակ, այնպիսի մի մինուս, ինչպես Հոկտեմբերյան հեղափոխության հայտնի միայնությունն է, նրա կողքին ու նրա հարեանությամբ խորհրդային յերկրի բացակայությունը, յերկիր, վորի վրա նա կարողանար հենվել։ Անտարակուսելի յե, վոր ապագա հեղափոխությունը, որինակ՝ Գերմանիայում, այս տեսակետից ավելի նպաստավոր դրության մեջ լվինի, վորովհետև նա իրեն հարեան ունի իր ուժով այնպիսի լուրջ մի խորհրդային յերկիր, ինչպես մեր Խորհրդային Միությունն է։ Ել յես չեմ խոսում Հոկտեմբերյան հեղափոխության այնպիսի մինուսի մասին, ինչպես պրոլետարական մեծամասնության բացակայությունն և յերկրում։

Բայց այս մինուսները միայն ընդդում են Հոկ-

տեմբերյան հեղափոխության ներքին ու արտաքին այն պայմանների յուրորինակության հսկայական նշանակությունը, վորոնց մասին վերը խոսվել է։

Այդ յուրորինակության մասին վոչ մի բողեք չի կարելի մոռանալ։ Նրա մասին առանձնապես հարկավոր է հիշել 1923 թվի աշնան գերմանական անցքերը վերլուծելիս։ Նրա մասին ամենից առաջ պետք է հիշել ընկ. Տրոցկին, վորն անհիմն կերպով անալոցիս յեկատարում Հոկտեմբերյան հեղափոխության ու Գերմանիայի հեղափոխության միջև և անդուսպ կերպով խարզանում և գերմանական կոմկուսակցությունը։ Նրա խսկական ու յերեակայական սխալների համար։

«Ուսասատանի համար, —ասում ե Լենինը, —1917 թվի կոնկրետ, սպամականորեն չափանց որիգինալ սիտուացիայում հեշտ եր սոցիալիստական հեղափոխություն սկսելը, մինչդեռ շարունակել այն և մինչև վերջը հասցնել՝ Ռուսաստանի համար ավելի գերազանց կլինի, քան յերկրոպական յերկների համար։ Դեռևս 1918 թվականի սկզբին ինձ հարկ յեղավ մատոննչել այս հանգամանքը, և դրանից հետո յերկամյա փորձը լիովին հաստատեց այսպիսի կըսադատության ճշտությունը։ Այնպիսի սպեցիալի պայմաններ, ինչպիսին են՝ 1) խորհրդային - հեղաժանումը խմբերի լիովանական պատերազմի վերջանալու հետ միացնելու հնարավորությունը, մի պատերազմ, վոր աներեւակայելլորեն տանջել և բանվորներին ու դյուլացիներին և վերջացնել և խորհըսթային հեղաշրջման չնորհիվ։ 2) իմպերիալիստական դիշատիչների յերկու համաշխարհուն-հզոր խմբերի մահացու կովկը վորոշ ժամանակով ողոսակործելու հնարավորությունը, խմբեր, վորոնն չեյին կարող միանալ խորհրդային թշնամու դեմ։ 3) համեմատարար յերկարան քաղաքացիական պատերազմին զիմանալու հնարավորությունը, մասամբ յերկրի հսկայական ծալվակ ու հաղորդակցության վատ միջոցների չնորհիվ։ 4) այնպիսի խորը բարեժուապ-զեմովկատական հեղափոխական շարժման առկայությունը զյուղացիության մեջ, վոր պրոլետարիատի կուսակցությունը զյուղացիության մեջ, վոր պրոլետարիատի կուսակցությունը զյուղացիության մեջ» (սոց.-հեղ. կու-

սակցությունից, վորը, իր մէծամանությամբ, խիստ թշնամի յեւ լուլէիդմին) վերցրեց հեղափոխական պահանջները և մեկ անգամից երականացրեց զրանք՝ քաղաքական իշխանությունը պրունակատի կողմից նվաճված լինելու չորբէիլ, —այդպիսի սպեցիֆիկ պայմաններ Արեմայան Յելբոսպայում այժմ չկան և այդպիսի կամ զրանց նման պայմանների կրկնվելը չառ ել հեշտ բան չէ: Այս թե ինչու, ի միջի այլոց, —բացի մի չառք այլ պատճառներից, —Արեմայան Յելբոսպայի համար սոցիալիստական հեղափոխություն սկսելին ամելի գժվար ե, քան ենq համար» (ան' հ. ՀՀV, էջ 206—207):

Լենինի այս խոսքերը չի կարելի մոռանալ:

II

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՈՒ
Ս.ՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԿԱՌ
ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ՅԵՎ ԸՆԿ. ՏՐՈՅԿՈՒ
ՊԵՐՄԱՆԵՆՏ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԹԵՇՈՒԱՆՆ

Դոյություն ունեն Հոկտեմբերյան հեղափոխության յերկու առանձնահատկություններ, վորոնց պարզելն անհրաժեշտ ե ամենից առաջ նրա համար, վորովեզի հասկանանք այդ հեղափոխության ներքին իմաստն ու պատմական նշանակությունը:

Այդ ի՞նչ առանձնահատկություններ են:

Այդ նախ՝ այն փաստն ե, վոր պրոլետարիատի դիկտուրան մեղ մոտ ծնվեց վորպես մի իշխանություն, վորը ծագել ե պրոլետարիատի ու գյուղացիության աշխատավոր մասսաների դաշինքի հիմքի վրա, ընդուրում վերջինները դեկավարվում են պրոլետարիատի կողմից: Յերկրորդ՝ այդ այն փաստն ե, վոր պրոլետարիատի դիկտուրան մեղ մոտ հաս-

տատվել ե վորպես արդյունք սոցիալիզմի հաղթության կապիտալիստորեն քիչ զարդացած մի յերկրում այն ժամանակ, յերբ կապիտալիզմը պահպանվել և մյուս, կապիտալիստորեն ավելի զարդացած, յերկրներում: Այդ չի նշանակում, իհարկե, թե Հոկտեմբերյան հեղափոխությունն ուրիշ առանձնահատկություններ չունի: Բայց մեզ համար այժմ կարեոր են հենց այս յերկու առանձնահատկությունները վո՞չ միայն պատճառով, վոր նրանք հատակորեն արտահայտում են Հոկտեմբերյան հեղափոխության եյությունը, այլև այն պատճառով, վոր նրանք հիանալի կերպով բացահայտում են «այերմանենտ հեղափոխության» թեորիայի ողբարունիստական բնությունը:

Համառոտակի քննենք այդ առանձնահատկությունները:

Քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի աշխատավոր մասսաների հարցը, այդ մասսաներին պրոլետարիատի կողմը նվաճելու հարցը պրոլետարական հեղափոխության կարևորագույն հարցն է: Իշխանության համար մղվող պայքարում թե ո՞ւմ կաջակցեն քաղաքի ու գյուղի աշխատավոր մարդեմ՝ բուրժուազիային, թե պրոլետարիատին, նրանք ո՞ւմ ուեզերվե կդառնան՝ բուրժուազիայի՝ ոեզերվը, թե պրոլետարիատի ուրանից ե կախված հեղափոխության բախտն ու պրոլետարիատի դիկտուրավայի հաստատումը: 48 և 71 թվականների հեղափոխությունները ֆրանսիայում կործանվեցին գլխավորապես այն պատճառով, վոր գյուղացիական ոեզերվները բուրժուատարիատի կողմը գտնվեցին: Հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթեց այն պատճառով, վոր կարո-

Դացավ բուրժուազիայից խլել նրա գյուղացիական ռեզերվները, կարողացավ այդ ռեզերվները նվաճել պրոլետարիատի կողմը, և այդ հեղափոխության մեջ պրոլետարիատը յեղավ քաղաքի ու գյուղի աշխատավոր մարդկանց միջոնավոր մասսաների միակ ղեկավարող ուժը:

Ով չի հասկացել այս, նա յերբեք չի հասկանա վո՛չ Հոկտեմբերյան հեղափոխության բնույթը, վո՛չ պրոլետարիատի դիկտատուրայի բնությունը, վո՛չ ել մեր պրոլետարական իշխանության ներքին քաղաքականության յուրոքինակությունը:

Պրոլետարիատի դիկտատուրան սոսկական կառավարական մի վերնախավ չե, վորը «վարպետորեն» «հատընտրված» ե «փորձված ստրատեգի» հոգատար ձեռքով և «խելացիորեն հենվում ե» բնակչության այս կամ այն խավերի վրա: Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի ու գյուղացիության աշխատավոր մասսաների դասակարգային դաշինքն ե՝ կապիտալի տապալման համար, սոցիալիզմի վերջնական հաղթության համար, պայմանով, վոր այդ դաշինքի ղեկավար ուժը պրոլետարիատն ե հանդիսանում:

Այսպիսով իսուքն այն մասին չե այստեղ, վոր «մի քիչ» թերագնահատվեն, կամ «մի քիչ» գերադահանակեն դրույթի կան շարժման հեղափոխական հնարավորությունները, ինչպես այժմ սիրում են արտահայտվել «ակերմաննենու հեղափոխության» դիվանագիտական պաշտպաններից վոմանք: Խոսքը վերաբերում է Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով ծագած նոր պրոլետարական պետության բնությանը: Խոսքը վերաբերում ե պրոլետարիատի իշխանության

բնույթին, պրոլետարիատի բուն իսկ գիկտատուրայի հիմունքներին:

«Պրոլետարիատի դիկտատուրան, —ասում ե Լենինը, —աշխատավորության ավանդարդ պրոլետարիատի ու աշխատավորների վո՞յզը պրոլետարական բազմաթիվ խավերի (մասն բուրժուազիա, մանր տնտեսատիրուկներ, գյուղացիություն, ինտելիգենցիա և այլն), կամ նրանց մեծամասնության միջև կնքված դասակարգային դաշինքի հասուկ ձևն, —մի դաշինք, վորն ուղղված ե կապիտալի դեմ, —դաշինք կապիտալը լիովին տապալելու, բուրժուազիայի դիմադրության և ռեստավրացիայի նրա կողմից յեղած փորձերը լույլին ճնշելու նպատակով, դաշինք սոցիալիզմի վերջնական ստեղծման ու ամրացման նպատակով» (տե՛ս հ. XXIV, եջ 311):

Յեշ այնուհետև.

«Պրոլետարիատի դիկտատուրան, յեթե այս լատինական, դիտական, պատմա-պիտիլսովայական արտահայտությունը թարգմանենք ամեւի պարզ լեզվով, ահա թե ինչ ե նշանակում: միայն փորոշ դասակարգ, այն ե՝ քաղաքային և առհասարակ ֆարբեկա-գործարանային, արդյունաբերական բանվորներն են ի վիճակի դեկապարելու աշխատավորների ու շահագործվողների ամրությամասային՝ կապիտալի Ծի տապալման համար մղվող պայքարում, բուն իսկ տապալման ընթացքում, հաղթության պահպանման ու ամրացման համար մղվող պայքարում, նոր, սոցիալիստական հասարակակարգ ստեղծելու գործում, դասակարգերի լիակատար վոչնչացման համար մղվող ամրություն» (տե՛ս հ. XXIV, եջ 336):

Այս ե պրոլետարիատի դիկտատուրայի այն թերիան, վոր ավել ե Լենինը:

Հոկտեմբերյան հեղափոխության առանձնահատկություններից մեկն այն ե, վոր այդ հեղափոխությունը պրոլետարիատի դիկտատուրայի լինիյան թերիայի կլասիկ կիրառումն ե:

Միքանի ընկերներ յենթագրում են, թե այդ թերիան զուտ «ոռոսական» թեորիա յե, վորը կապ ունի

միայն ռուսաստանյան իրականության հետ։ Այդ ճիշտ չէ։ Այդ միանգամայն սխալ է։ Խոսելով պրոլետարիատի ղեկավարած վոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաների մասին՝ Լենինը նկատի ունի վոչ միայն ռուսական գյուղացիներին, այլև Խորհրդային Միության գեուսա մոտ անցյալում Ռուսաստանի գաղութներ ներկայացնող ծայրամասերի աշխատավորական տարրերին։ Լենինն անդադար պնդում էր, վոր Ռուսաստանի պրոլետարիատն առանց այդ այլազգի մասսաների հետ դաշինք կնքելու չի կարողանա հաղթել։ Ազգային հարցին վերաբերող իր հոդվածներում և Կոմիտերնի կոնդրեսներում արտասանած իր ճառերում Լենինը բազմից ասել է, վոր համաշխարհային հեղափոխության հաղթությունն անհնարին և առանց առաջավոր յերկրների պրոլետարիատի հեղափոխական դաշինքի, հեղափոխական բլոկի՝ ստրկացված դաղութների ճնշված ժողովուրդների հետ։ Բայց ի՞նչ են դաղութները, յեթե վոչ նույն այդ ճնշված աշխատավոր մասսաները, և ամենից առաջ գյուղացիության աշխատավոր մասսաները։ Ո՞ւմ հայտնի չեն, վոր գաղութների աղատադրման հարցը, ըստ եյության, վոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաները Փինանսական կապիտալի ճնշումից ու շահագործումից աղատելու հարցն ե։

Բայց սրանից հետեւում ե, վոր պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիան զուտ «ռուսական» թեորիա չեն, այլ մի թեորիա յեն, վորը պարտադիր ե բոլոր յերկրների համար։ Բոլշևիզմը միայն ռուսական յերեսույթ չեն։ «Բոլշևիզմը», — ասում ե Լենինը,

«տակտիկայի տիպար ե բոլորի համար» (տե՛ս Հ. ԽՍՀ, եջ 386)։

Երանք են Հոկտեմբերյան հեղափոխության առաջին առանձնահատկության բնորոշ գծերը։

Ի՞նչպես ե ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» թեորիայի բանը Հոկտեմբերյան հեղափոխության այս առանձնահատկության տեսակետից։

Չենք ընդարձակաբանի ընկ. Տրոցկու 1905 թվականի դիրքի մասին, յերբ նա «պարզապես» մոռացել եր գյուղացիության՝ վորպես հեղափոխական ուժի մասին, առաջադրելով «առանց ցարի, իսկ կառավարությունը բանվորական» լոգունգը, այսինքն՝ հեղափոխություն առանց գյուղացիության՝ լողունգը։ Նույնիսկ ընկ. Ռադեկը, «պերմանենտ հեղափոխության» այդ դիվանագիտական պաշտպանը, այժմ հարկադրված ե ընդունել, վոր «պերմանենտ հեղափոխությունը» 1905 թվականին նշանակում եր իրականությունից «ցատկում դեպի ողը» (տե՛ս «Պրավда»։ 1924 թվի դեկտեմբերի 14)։ Հիմա յերեկի բոլորն ել ընդունում են, վոր այլևս չարժե զբաղվել այդ «ցատկումով դեպի ողը»։

Չենք ընդարձակաբանի նաև ընկ. Տրոցկու պատերազմի ժամանակաշրջանի, ասենք 1915 թվականի, դիրքի մասին, յերբ նա իր «Պայքար իշխանության համար» հոդվածում, յենելով այն բանից, թե «մենք ապրում ենք իմպերիալիզմի դարաշրջանում», վոր իմպերիալիզմը «վո՞չ թե բուրժուական ազգն ե հակադրում հին ռեժիմին, այլ պրոլետարիատը՝ բուրժուական ազգին», յեկավ այն յեղակացության, վոր գյուղացիության հեղափոխական դերը պետք

և նվազի, վոր հողի կոնֆիսկացիայի լողունղն
արդեն չունի այն նշանակությունը, ինչ նա ուներ
առաջներում (տե՛ս «1905 թվականը», էջ 289—292):
Հայտնի յէ, վոր Լենինը, քննության առնելով ընկ.
Տրոցկու այդ հոդվածը, այն ժամանակ մեղադրում եր
նրան «գյուղացիության դերը» «Ժխտելու» համար,
ասելով, վոր «Տրոցկին իրականում ոգնում ե Ռուսաս-
տանի լիբերալ բանվորական քաղաքազեներին, վո-
րոնք գյուղացիության դերի «Ժխտում» ասելով՝ հաս-
կանում են հեղափոխության համար գյուղացիներին
վոտքի հանել չցանկանալը» (տե՛ս Հ. ԽՎԱՅ, էջ 318):

Միելի բավ և անցնենք այս հարցի վերաբերյալ
ընկ. Տրոցկու ամելի ուշ ժամանակվա աշխատություն-
ներին, այն ժամանակաշրջանի աշխատություններին,
յերբ պրոլետարական դիկտատուրան արդեն կարողա-
ցել եր հաստատվել և յերբ ընկ. Տրոցկին հնարավո-
րություն ուներ գործով ստուգելու «պերմանենտ
հեղափոխության» իր թեորիան և ուղելու իր սխալ-
ները: Վերցնենք ընկ. Տրոցկու «1905 թվականը» գրքի
«Առաջարանը», վոր գրված է 1922 թվին: Ահա թե
ինչ ե ասում ընկ. Տրոցկին այդ «Առաջարանում»
«պերմանենտ հեղափոխության» մասին:

«Հենց 1905 թվի հունվարի 9-ի և հոկտեմբերյան գործա-
դուլի արանքում ընկած ժամանակամիջոցում կազմակորվեցին
հեղինակի այն հայցաքնները մուսաստանի հեղափոխական զար-
գացման բնույթի մասին, զորոնք ստացան «պերմանենտ հեղա-
փոխության» թեորիա անունը: Այդ իրթին անվանումն արտա-
հայտում եր այն միտքը, թե սուսական հեղափոխությունը, վո-
րի առաջ անմիջականորեն բուրժուական նվաստակներ են կանգ-
նած, չի կարողանա, սակայն, կանգ առնել նրանց վրա: Հեղա-
փոխությունը չի կարողանա իր մերձավոր բուրժուական խնդիր-
ները լուծել այլ կերպ, բայց յեթե իշխանության գլուխ կանց-

նեցնելով պրոլետարիատին: Իսկ վերջինս, իշխանությունն իր
ձեռքն առնելով, հեղափոխության մեջ չի կարողանա իրեն սահ-
մանափակել բուրժուական ըշմանակներով: Բնդհակառակը, հետ
իր հաղթությունն ապահովվելու համար հարկ կլինի, վոր պրոլե-
տարական ավանդաբարդն իր արբանեառության առաջին իսկ պահին
ամենախոր ներխուժումները կատարի վո՞չ միայն ֆեոդալական,
այլև բուրժուատական սեփականության մեջ: Բնդհամին նա քշամա-
կան ընդհարումների մեջ կմտնի վո՞չ միայն բուրժուատագիայի բո-
ւոր նմբավորումների հետ, վորոնք իրեն աշխացում ենին իր հե-
ղափոխական պայքարի առաջին պահին, այլև զյուլցիոնքյան
լայն մասամբների հետ, վորոնց աշխացությամբ նա իշխանության
և հասել: Գյուղացիական բնակչության ճնշող մեծամասնություն
առնեցող հետամնաց մի յերկրում բանվորական կառավարության
դրույթյան հակասությունները կարող են իրենց լուծումը գտնել
միայն միջազգային մասշտաբով, պրոլետարիատի համաշխարհա-
յին հեղափոխության ասպարեզում» (տե՛ս ընկ. Տրոցկու «1905
թվականը» դրքի վերը հետապնդած «Առաջարանը» 1):

Այսպես ե ասում ընկ. Տրոցկին իր «պերմանենտ
հեղափոխության» թեորիայի մասին:

Բավական ե միայն բաղդատել այս ցիտաաը Լենինի
յերկերից վերը բերված՝ պրոլետարիատի դիկտատու-
րային վերաբերող ցիտաաների հետ, վորպեսզի հաս-
կանանք այն ամբողջ անդունդը, վոր բաժանում ե
պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիան
ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» թեո-
րիայից:

Լենինը խոսում է պրոլետարիատի ու գյուղացիու-
թյան աշխատավորական խավերի դաշինքի մասին,
վորպես պրոլետարիատի դիկտատուրայի հիմքի մա-
սին: Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «պրոլետարա-
կան ավանդաբարդի» «քննամական ընդհարումներ»
«գյուղացիության լայն մասամերի» հետ:



Լենինը խոսում է պրոլետարիատի կողմից աշխատավորների ու շահագործվողների ժամաներին դեկավարելու մասին։ Իսկ Տրոցկու մոտ ստացվում էն «հակասություններ» բանվորական կառավարության դրության մեջ՝ գյուղացիական բնակչության ճնշող մեծամասնություն ունեցող հետամնաց մի յերկրում։

Բայտ Լենինի՝ հեղափոխությունն իր ուժերը քաղաքամասնությունն իր ուժերը քաղաքամասնությունն իր ուժերը ու դյուլացիների միջից։ Իսկ Տրոցկու մոտ այնպես է գուրս գալիս, վոր անհրաժեշտ ուժերը կարելի յեքաղել միայն «պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ասպարեզում»։

Իսկ ի՞նչպես վարվենք, յեթե միջազգային հեղափոխությանը վիճակված է ուշացումով դալ։ Մեր հեղափոխության համար լույսի վորեե նշույլ կա՞ արդյոք։ Ինկ. Տրոցկին չի տալիս լույսի վոչ մի նշույլ, վորովհետև «հակասությունները բանվորական կառավարության դրության մեջ...կարողանան իրենց լուծումը գտնել միայն...պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ասպարեզում»։ Բայտ այս պլանի՝ մեր հեղափոխության համար մնում է միայն մի հետանկար։ Քարշ տալ իր գոյությունը սեփական հակասությունների մեջ և արմատի վրա փոել՝ համաշխարհային հեղափոխության սպասելով։

Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան՝ ըստ Լենինի։

Պրոլետարիատի դիկտատուրան մի իշխանություն է, վոր հենվում է պրոլետարիատի ու գյուղացիության աշխատավոր մասսաների դաշինքի վրա, վորը կընդված է «կտապէտալի լիակատաք տապալման» համար,

«սոցիալեպմի վերջնական ստեղծման ու ամբապնդման» համար։

Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան՝ ըստ Տրոցկու։

Պրոլետարիատի դիկտատուրան մի իշխանություն է, վորը «թշնամական ընդհարումների մեջ» և մտնում «գյուղացիության լայն մասսաների» հետ և «հակասությունների» լուծումը վերոնում է միայն «պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ասպարեզում»։

Ի՞նչո՞վ և տարբերվում «պերմանենտ հեղափոխության» այս «թեորիան» պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի ժխտման վերաբերյալ մենշևիզմի հայտնի թեորիայից։

Բայտ եյության՝ վոչնչով։

Տարակույներն անհնարին են։ «Պերմանենտ հեղափոխությունը» գյուղացիական շարժման հեղափոխական համարվորությունների սոսկական թերագնահատություն չե։ «Պերմանենտ հեղափոխությունը» գյուղացիական շարժման մի այնպիսի թերագնահատություն է, վորը դեպի պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիայի Ժխտումն է տանում։

Ինկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխությունը» մենշևիզմի այլատեսակությունն է։

Այսպես և բանը Հոկտեմբերյան հեղափոխության առաջին առանձնահատկության վերաբերմամբ։

Վորո՞նք են Հոկտեմբերյան հեղափոխության յերկրորդ առանձնահատկության բնորոշ դժերը։

Ռևոլյունտասիրելով իմպերիալիզմը, մանավանդ պատերազմի ժամանակաշրջանում, Լենինը հանգեց կա-

պիտալիստական յերկրների տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաշափության, թուիչքառելության որենքին: Ըստ այդ որենքի իմաստի՝ ձևոնարկությունների, արեստների, արդյունաբերության ճյուղերի ու առանձին յերկրների զարգացումը կատարվում է վո՞չ թե հավասարաշափ կերպով, վո՞չ թե սահմանված հերթականության կարգով, վո՞չ թե այնպես, վոր մի արեստը, արդյունաբերության մի ճյուղը կամ մի յերկրն ամբողջ ժամանակ առջելից դնան, իսկ մյուս տրեստները կամ յերկրները հաջորդականորեն մեկը մյուսի հետեւից հետ մնան,—այլ թուիչքանե, մի շարք յերկրների զարգացման մեջ առեղիունեցող ընդհատումներով ու մյուս յերկրների զարգացման մեջ տեղի ունեցող թուիչքներով դեպի առաջ: Ընդունին հետ մնացող յերկրների հին գիրքերը պահպանելու «միանգամայն որինական» ձգտումը և առաջ ցատկած յերկրների՝ նոր գիրքեր զավթելու նույնքան «որինական» ձգտումն ունենում են այն հետեւանքը, վոր իմպերիալիստական յերկրների պատերազմական ընդհարումներն անխուսափելի անհրաժեշտություն են հանդիսանում: Այդպես պատահեց, որինակ, Գերմանիային, վորը կես դար առաջ, Ֆրանսիայի ու Անգլիայի հետ համեմատած, մի հետամնաց յերկիր եր: Նույն այդ բանը պետք է ասել ձաւոնիայի մասին՝ Ռուսաստանի հետ համեմատած: Սակայն հայտնի յէ, վոր արդեն XX դարի սկզբին Գերմանիան ու Ճապոնիան այնքան ելին առաջ ցատկել, վոր առաջինը կարողացել եր անցնել Ֆրանսիայից ու սկսել եր նեղել Անգլիային համաշխարհային շուկայում, իսկ յերկրորդը՝ Ռուսաստանին: Հենց այդ հակասություններից

ել, ինչպես հայտնի յէ, ծագեց մոտ անցյալի իմպերիալիստական պատերազմը:

Այդ որենքը յելնում ե նրանից, վոր

1) «Կապիտալիզմը վերաճել ե մի բուռ «առաջավոր» յերկրների կողմից յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը զարդարությային ճնշման ու ֆինանսական խեղզման յենթարկելու համաշխարհային սիստեմի» (տես Լենինի «Իմպերիալիզմի» ֆրանսիական հրատարակության առաջարանը, հ. XIX, եջ 74):

2) «Այդ «ավարի» բաժանումը կատարվում է համաշխարհուն հզոր, վոտից-գլուխ զինված յերկու-յերեք դիշատիչների (Ամերիկա, Անգլիա, Ճապոնիա) միջև, վորոնք իրենց ավարը բաժանելու համար մզած իրենց պատերազմի մեջ են քաշում ամբողջ յերկրագունդը» (տե՛ս նույն տեղը):

3) Հակասությունների աճումը ֆինանսական ճնշման համաշխարհային սիստեմի ներսում և ուղղական ընդհարումների անխուսափելությունը տանում են գեղի այն, վոր իմպերիալիզմի համաշխարհային ճակատը հեղափոխության համար դառնում ե դյուքախոցելի, իսկ այդ ճակատի ճեղքումն առանձին յերկրների կողմից՝ հավանական:

4) Այդ ճեղքումն ամենից ավելի հավանական կերպով կարող է տեղի ունենալ այն կետերում և այն յերկրներում, վորտեղ իմպերիալիստական ճակատի շրջան ավելի թույլ ե, այսինքն՝ վորտեղ իմպերիալիզմն ամենից քիչ ե կովկած, իսկ հեղափոխության համար ճավալին ամենից հետո:

5) Դրա համար ել սոցիալիզմի հաղթությունը մե

յերկրում, —յեթե այդ յերկրը նույնիսկ պահան և զարգացած կապիտալիստորեն, իսկ կաղթառվագրը պահպանիկ ե մյուս յերկրներում, յեթե այդ յերկրները կապիտալիստորեն նույնիսկ ավելի յեն զարդացած, —լիովին հնարավոր ե ու հավանական:

Սրանք են՝ յերկու խոսքով ասած՝ պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի հիմունքները:

Վո՞րն ե Հոկտեմբերյան հեղափոխության յերկրորդ առանձնահատկությունը:

Հոկտեմբերյան հեղափոխության յերկրորդ առանձնահատկությունն այն է, վոր այդ հեղափոխությանը պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիան պրակտիկայում կիրառելու տիպարն է:

Ով չի հասկացել Հոկտեմբերյան հեղափոխության այս առանձնահատկությունը, նա յերբեք չի հասկանա վո՛չ այդ հեղափոխության ինտերնացիոնալ քնությունը, վո՛չ նրա միջազգային հոկայական հզորությունը, վո՛չ նրա յուրորինակ արտաքին քաղաքականությունը:

«Տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաշահությունը, —ասում ե Լենինը, —կապիտալիզմի անպայմանական օրենքն է: Այստեղից հետեւում ե, վոր սոցիալիզմի հաղթությունը հնարավոր ե սկզբում միքանի կամ նույնիսկ մի՛ առանձին վեցցրած՝ կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթած պրոլետարիատը, և քաղաքացիացին յնթարկելով կապիտալիստաներին իր յերկրում սոցիալիստական արտադրություն կազմակերպելով՝ վատքի կերներ մնացած, կապիտալիստական աշխարհի դեմ՝ իր կողմը զբանելով մյուս յերկրների ճնշված դասակարգերին, այդ յերկրներում ազստամբություն բարձրացնելով կապիտալիստների զեմք, անհաջենառության դեպքում նույնիսկ ուղաժական ուժով հանդես դալով շահազործող դասակարգերի և նրանց պետությունների դեմ»: Վորովչեսկ «անհարին և ազգերի ազատ միավորումը սոցիալիզմի մեջ առանց սոցիալիստական

Հանրապետությունների շատ թե քիչ յերկարաժամկետացած գաղաքայի հետամնաց պետությունների դեմ» (աե՛ւ հ. Ա. ԽVIII, էջ 282—233):

Բոլոր յերկրների ոպորտունիստները պնդում են, թե պրոլետարական հեղափոխությունը կարող է սկզբանից յեթե նա, ըստ նրանց թեորիայի, ընդհանրապես պետք է վորեւ տեղ սկզբից միայն արդյունաբերականություն զարգացած յերկրներում, թե վորքան ամելի յեն զարգացած այդ յերկրներն արդյունաբերական տեսակետից, այնքան ամելի շանսեր կան սոցիալիզմի հաղթության համար, ընդվորում մի յերկրում, այն ել կապիտալիստորեն քիչ զարգացած յերկրում, սոցիալիզմի հաղթելու հնարավորությունը նրանք բացառում են, իբրև միանդամայն անհավանական մի բան: Լենինը դեռևս պատերազմի ժամանակ, հենք վելով իմպերիալիստական պետությունների անհավասարաշափ զարգացման որենքի վրա, ոպորտունիստներին հակադրում ե պրոլետարական հեղափոխության իր թեորիան այն մասին, վոր սոցիալիզմը կարող է հաղթել մի յերկրում, յեթե նույնիսկ այդ յերկրը կապիտալիստորեն պակաս և զարգացած:

Հայտնի յէ, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունն ամբողջապես հաստատեց պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի ճշուածությունը:

Ի՞նչպես ե ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» լրանը պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի տեսակետից:

Վերցնենք ընկ. Տրոցկու «Մեր հեղափոխությունը» (1906 թ.) բրոշյուրը: Ընկ. Տրոցկին գրում է.

«Առաջ յեկարպական պրոլետարիատի պետական ուղղակի ա-

ջակցութան՝ Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարողանա
իշխանությունը պահել և իր ժամանակավոր տիրապետությունը
վերածել յերկարատև սոցիալիստական դիկտատուրայի: Արա
նկամամբը մի բողոք տնօտեմ չի կարելի կասկածել» (տե՛ս «Մեր
Հեղափոխությունը», էջ 278):

Ինչի՞ մասին ե խոսում այս ցիտատը: Հենց այն
մասին, վոր սոցիալիզմի հաղթությունը մի յերկրում,
տվյալ դեպքում՝ Ռուսաստանում, անհնարին և «առանց
յելքոպական պրոլետարիատի պետական ուղղակի
աջակցության», այսինքն մինչև յելքոպական պրոլե-
տարիատի կողմից իշխանություն նվաճելը:

Ի՞նչ ընդհանուր բան կա այս «թեորիայի» և լե-
նինի այն դրույթի միջև, վոր հնարավոր և սոցիալիզ-
մի հաղթանակը «մեկ՝ առանձին վերցրած՝ կապիտո-
լիստական յերկրում»:

Պարզ ե, վոր այսուեղ ընդհանուր վոչինչ չկա:

Բայց յենթադրենք, թե ընկ. Տրոցկու այս բրո-
ցուրը, վոր հրատարակել և 1906 թվականին, յերբ
գծվար եր վորոշել մեր հեղափոխության բնույթը,
ակամա սխալներ և պարունակում և վոչ-լիովին և հա-
մապատասխանում ընկ. Տրոցկու ամելի ուշ ժամա-
նակաշրջանի հայցքներին: Քննության առնենք ընկ.
Տրոցկու մեկ ուրիշ բրոցյուրը, նրա «Հաշտության
ծրագիրը», վորը լույս ե ընծայվել 1917 թ. Հոկտեմ-
բերյան հեղափոխության նախորյակին և այժմ
(1924 թ.) վերահրատարակվել և «1917» գրքում: Այս
բրոցյուրում ընկ. Տրոցկին քննադատում և պրոլետա-
րական հեղափոխության լենինյան թեորիան մի յեր-
կրում սոցիալիզմի հաղթելու մասին և նրան հակա-
զրում և Յելքոպայի Միացյալ Նահանգների լողումը:
Նա պնդում է, թե սոցիալիզմի հաղթությունը

յերկրում անհնարին է, թե սոցիալիզմի հաղթությունը
հնարավոր է վորպես Յելքոպայի միավորված ու Յել-
քոպայի Միացյալ Նահանգներ կազմած միքանի հիմ-
նական յերկրների (Անդվիա, Ռուսաստան, Գերմանիա)
հաղթություն միայն, կամ այդ հաղթությունը բո-
լորովին անհնարին է: Նա ուղղակի ասում է, վոր
«հաղթական հեղափոխությունը Ռուսաստանում կամ
Անդվիայում աներեակայելի յև առանց Գերմանիայի
հեղափոխության, և ընդհակառակը» (տե՛ս «1917»,
ընկ. Տրոցկու Յերկերի III հ., մ. 1, էջ 89):

«Պատմական փոքրիչառ կոնկրետ միակ նկատառումը Միա-
ցյալ Նահանգների լոգունքի դեմ՝ ասում է ընկ. Տրոցկին, —
ձեւերեավել և չվեցցարկան «Սոցիալ-դեմոկրատում» (բոլ.
շեկեների այն ժամանակա կենտրոնական որդանը: Ի. Սա.) հե-
շեյալ Փրազի մէջ. «Տնտեսական ու քաղաքական դարպացման
անհամառաջափոխությունը կապիտալիզմի անպայմանական որենքն
անդամասրաջափոխությունը կապիտալիզմի այսուղից անում եր այն հետեւթյու-
նը, վոր հնարավոր և սոցիալիզմի հաղթությունը մի յերկրում,
և վոր այդ պատճառով կարեք չկա պրոլետարիատի դիկտուտու-
րան յուրաքանչյուր առանձին պետության մեջ պայմանավորել
Յելքոպայի Միացյալ Նահանգների ստեղծումով: Վոր տարբեր
յերկեների կապիտալիստական զարգացումն անհամառաջափ և,
այդ միանգամայն անվիճելի դատողություն է: Բայց այդ անհա-
մառաջափոխությունն ինքը միանգամայն անհամառաջափ և:
Անդվիայի, Ավստրիայի, Գերմանիայի կամ Ֆրանսիայի կալիսա-
մասական մակարդակը միատեսակ չէ: Բայց Աֆրիկայի ու Ա-
միայի հետ համեմատած՝ այդ բոլոր յերկեները ներկայացնում
են կապիտալիստական «Յելքուսպա», վորը հասունացել և սոցիա-
կան հեղափոխության համար: Վոր վո՛չ մի յերկեր իր պոյ-
լական հեղափոխության համար: Վոր վո՛չ մի յերկեր իր պոյ-
լական հեղափոխության պարբական մի միաքարեւում չպետք
քարում չպետք և «պատմի» ուրիշներին—այս տարբական մի միաքա-
րեւում, վորն ոդարակար ու անհրաժեշտ է կրկնել, վորպես զուգա-
հետ ինտերնացիոնալ դործողության գաղափարը չներկափոխի
ներ ինտերնացիոնալ սպասողական անդորրության գաղափարով: Ու-
շեներին չոպանական մենք մկանում և շարունակում ենք պայ-
րիշներին չոպանելով՝ մենք մկանում և շարունակում ենք պայ-

քարն աղջային հողի վրա, միսլին հավատացած մենելով, վոր մեր նախաձեռնությունը զարկ կտա մյուս յերկներում տեղի ունեցած պայքարին. իսկ յեթէ այդ տեղի չունենար, ապա անհուսալի կլիներ կարծել—այս են վկայում թէ՛ պատմության փորձը, թէ՛ թերփական նկատառումները,—վոր, սթիճակ, հեղափոխական Ռուսաստանը կարող կլինի գիմակայել ուսականողական Յելբոպայի հանդեպ, կամ սոցիալիստական Գերմանիան կառող կլինի մեկուսացած մնալ կապիտալիստական աշխարհում» (տե՛ս Տրոցկու Յերկերի հ. III, մ. 1, էջ 89—90):

Ինչպես տեսնում եք, մեր առջևն ե Յելբոպայի հիմնական յերկրներում սոցիալիզմի միաժամանակ հաղթելու նույն թերփան, վորը, իրքն կանոն, բացառում ե հեղափոխության մնինյան թերփան՝ մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մասին:

Ինչ խոսք, վոր սոցիալիզմի լիակատար հաղթության համար, հին կարգերի վերականգնման դեմ լիակատար յերաշխիք ունենալու համար անհրաժեշտ են միքանի յերկրների պրոլետարների միահամբուռ ջանքերը: Ինչ խոսք, վոր առանց Յելբոպայի պրոլետարիատի աջակցության մեր հեղափոխությանը, Ռուսաստանի պրոլետարիատը չեր կարողանա դիմակայել (ՍТОՅԱՔ) ընդհանուր ճնշմանը, ճիշտ այնպես, ինչպես և Արևմուտքի հեղափոխական շարժումն առանց Ռուսաստանի հեղափոխության աջակցության չեր կարողանա զարդանալ այն տեմպով, վորով նա սկսեց զարդանալ Ռուսաստանում պրոլետարական դիկտուրա հաստատվելուց հետո: Ինչ խոսք, վոր մեզ աջակցություն ե հարկալոր: Բայց ի՞նչ բան ե արևմտա-յելբոպական պրոլետարիատի աջակցությունը մեր հեղափոխությանը: Յելբոպական բանվորների համականքը դեղի մեր հեր հեղափոխությունը, նրանց պատրաստակա-

մաւթյունը՝ խափանելու իմպերիալիստաների՝ ինամեր-վենցիայի վերաբերյալ պլանները—այս ամենն աջակ-ցություն ե արդյոք, լուրջ ոգնություն ե: Անպայման այս: Առանց այդպիսի աջակցության, առանց վոչ մի-այն յելբոպական բանվորների, այլև գաղութային ու կախյալ յերկրների այդպիսի աջակցության, այդպիսի ոգնության՝ Ռուսաստանի պրոլետարական դիկտուրայի բանը դժվար կլիներ: Արդյո՞ք մինչև այժմ բա-վական ե յեղել այդ համականքը և այդ ոգնությու-նը, վորը միացած ե մեր կարմիր բանակի հզորության հետ և Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների՝ սոցիալիստական հայրենիքը կրծքով պաշտպանելու պատրաստակամության հետ,—արդյո՞ք այս ամենը բա-վական ե յեղել, վորպեսզի հետ մղենք իմպերիալիստ-ների գրուները և անհրաժեշտ պայմաններ նվաճենք լուրջ շինարարական աշխատանքի համար: Այսո՛, լուրջ շինարարական աշխատանքն անո՞ւմ և ար-րավական ե յեղել: Այդ համականքն անո՞ւմ և ար-րավական ի յեղել: Այդ համականքն անում է: Այդպիսով դյոք, թէ նվազում է: Անպայման անում է: Այդպիսով մենք ունենք արդյոք բարենպատ պայմաններ վո՛չ մի-այն նրա համար, վորպեսզի առաջ շարժենք սոցիալի-տական տնտեսություն կազմակերպելու գործը, այլ-ուական համար, վորպեսզի, մեր հերթին, աջակցությունը տանը ինչպես արևմտա-յելբոպական բանվոր-ներին, այնպես ել Արևելքի ճնշված ժողովուրդներին: Այսո՛, ունենք: Դրա մասին պերճախոս կերպով վե-ստույց տանք ինչպես արևմտա-յելբոպական բանվոր-ներին, այնպես ել Արևելքի ճնշված ժողովուրդներին:

Այս ամենից հետո ի՞նչ նշանակություն կարող ե

ունենալ ընկ. Տրոցկու հայտարարությունն այն մասին, թե հեղափոխական Ռուսաստանը չեր կարողանա դիմակայի պահպանողական Յեվրոպայի հանդեպ:

Դա կարող է միայն մի նշանակություն ունենայ նախ՝ ընկ. Տրոցկին չի զգում մեր հեղափոխության ներքին հղորությունը. յերկրորդ՝ ընկ. Տրոցկին չի հասկանում այն բարոյական աջակցության անդնահատելի նշանակությունը, վոր մեր հեղափոխությանը ցույց են տալիս Արևմուտքի բանվորներն ու Արևելքի դյուղացիները. յերրորդ՝ ընկ. Տրոցկին չի կարողանում ըմբռնել այն ներքին անկարությունը, վորը ներկայումս մաշում ե իմպերիալիզմին:

Տարվելով պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի քննադատությամբ՝ ընկ. Տրոցկին անակնակարգեն գլխովին ջախջախեց իրեն 1917 թվին լույս տեսած և 1924 թվին վերահրատարակված իր «Հաշտության ծրագիր» բրոցյուրում:

Բայց դուք հնացել ե ընկ. Տրոցկու նաև այս բրոցյուրը, վորեւ պատճառով գաղարելով նրա այժմյան հայացքներին համապատասխանելուց: Վերցնենք ընկ. Տրոցկու ավելի ուշ ժամանակների աշխատությունները, վորոնք դրվել են այն ժամանակ, յերբ պրոլետարական հեղափոխությունը հաղթել եր մի յերկրում, Բուռաստանում: Վերցնենք, որինակ, «Հաշտության ծրագիր» բրոցյուրի նոր հրատարակության ընկ. Տրոցկու «Վերջարանը», վոր դրված և 1922 թվականին: Ահա թե ինչ ե գրում նա այդ «Վերջարանում»:

«Հաշտության ծրագրում» միքանի անդամ կրկնվող այն պնդումը, թե պրոլետարական հեղափոխությունը չի կարող հաղթականութեն ավարտմել աղքամին շրջանակներում, թերիս, ըն-

թերցողներից վաճանց համար հերթակած թվա մեր հարգագույն համարյա հնգամյա փորձով: Բայց այդպիսի յեղակացությունն անհիմն կլիներ: Այն վաստը, վոր ամրոց աշխարհի դեմ բանվորական պետությունը կանոնուն մնաց մի յերկրում, այն ել հետամնաց մի յերկրում, վելայում և պարետարիանի հակայական հզորության մասին, վորն ուրիշ, ամենի առաջական ավարտի յերկրներում ընդունակ կլինի հիբալոր, ավելի քաղաքակրթ յերկրներում չի համարական համարի հրաշքները դործելու: Բայց պաշտպանելով ու պահպանելով մեղ քաղաքական ու ապօպական իմաստով, վորովես պետություն, մենք սոցիալիստական հասարակության ստեղծման Հասանք և նույնիսի չմոտեցանք... Քանի գեռ մնացած յերկրոպական պետություններում իշխանության զլուխ կանցնած և բուրժուատան, մենք, պայքարելով անտեսական մեկուսացման դեմ՝ ստիպված ենք համաձայնություն վորոնել կապիտալիստական աշխարհի հետ: Մինույն ժամանակ կարելի յե վստահ կերպով ասել, վոր այդ համաձայնությունները, լավագույն դեպքում, կարող են ողնել մեզ բժշկելու այս կամ այն անտեսական վերքը, անելու այս կամ այն քայլը դեպի առաջ, բայց վոր սոցիալիստական անտեսության իսկական վերելքը Ռուսաստանում հնարավոր կղանա Եվրոպայի կարևորագույն յերկրներում պրոլետարիատի հաղթելուց հետո միայն»¹ (ան'ս ընկ. Տրոցկու Յերկերի հ. III, մ. 1, էջ 92—93):

Այսպես ե ասում ընկ. Տրոցկին՝ ակնհայտորեն մեղանչելով իրականության դեմ և համառորեն ջանալով փրկել «պերմանենտ հեղափոխությունը» վերջնական կործանումից:

Դուրս ե գալիս, վոր ինչպես ել շուտումուս դաս, սոցիալիստական հասարակության ստեղծման վո՞չ միայն «Ենք հասել», այլ մինչեւ անդամ «Հենք ել ժուտեցել»: Բանից դուրս ե զալիս, վոր վոմանք «կապիտալիստական աշխարհի հետ համաձայնությունների դալու» հույս են ունեցել, բայց պարզվում ե, վոր

¹ Բնդգծումն իմն է: Ի. Ալտ. :

այդ համաձայնություններից նույնական բան դուրս չէ դալիս, վորովճեաւ, ինչուն ել շուռումուռ գտան, «սոցիալիստական տնտեսության իսկական վերելք» չես օտանա, մինչև վոր պղովետարիստը չհաղթի «Յերկրոպայի կարեռագույն յերկրներում»:

Իսկ քանի վոր Արևմուտքում գեռևս հաղթություն չկա, ապա Բուռսաստանի հեղափոխության համար մնում ե «ընտրություն անել»—կամ արմատի վրա փոնել, կամ վերասերվել բուրժուական պետության:

Չուր չե, վոր ընկ. Տրոցկին ահա արդեն յերկու տարի յի՛ խոսում ե մեր կուսակցության «վերասերման» մասին:

Չուր չե, վոր ընկ. Տրոցկին անցյալ տարի մարդարեանում եր մեր յերկրի «կործանման» մասին:

Այս տարրոինակ «թեորիան» ի՞նչպես համաձայնենել «մի յերկում սոցիալիզմի հաղթության» վերաբերյալ Լենինի թեորիայի հետ:

Այս տարրոինակ «հեռանկարն» ի՞նչպես համաձայնենել Լենինի այն հեռանկարի հետ, ըստ վորի տնտեսական նոր քաղաքականությունը «սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը կառուցելու» հնարամորություն կտա մեզ:

Այս «պերմանենտ» անհուսությունն ի՞նչպես համաձայնեցնենք Լենինի, որինակ, հետեյալ խոսքերի հետ.

Սոցիալիզմն արդեն այժմ հեռավոր ապահովյի, կամ վորեւ վերցագան պատկերի, կամ վորեւ սրբապատկերի հարց չե: Մըրապատկերների նկատմամբ մենք մնացել ենք մեր հին, խիստ քու կարծեցին: Մենք սոցիալիզմը ներս ենք քաշել առորյա-

կյանքի մեջ և այսուղի ե, վոր պետք ե դլուխ հանենք: Ահա թե ինչն ե մեր որվա խնդիրը, ահա թե ինչն ե մեր դարաշընմանի խնդիրը: Թույլ տվեք ինձ վերջացնելու՝ արտահայտելով այս վստահությունը, վոր ինչքան ել այդ խնդիրը դժվար լինի, ինչքան ել այն նոր լինի մեր առաջիւ խնդրի հետ համեմատած և վորքան ել այն չափ դժվարություններ և պատճառում մեզ,— մենք բոլորս միասին, վոչ թե վաղը, այլ միասնի տարվա ընթացքում, մենք բոլորս միասին կլուծենք այդ խնդիրը՝ ինչպես ել լինի, այնպես վոր նեղական Բուռսաստանից կստացվի սոցիալիստական Բուռսաստան» (տե՛ս Հ. XXVII, էջ 306):

Ի՞նչպես հսկմաձայնեցնենք այդ «պերմանենտ» անհուսությունը Լենինի, որինակ, հետեյալ խոսքերի հետ.

«Իրոք պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի դաշինքը չափ միլիոններ կազմող մանր ու մանրագույն գյուղացիների հետ, այդ պրոլետարիատի համար գյուղացիությանը վեկալարելու դորձն ապահովելը և այն—միթե այս այն ամենը չե, ինչ հարկավոր ե, վորպեսզի կոռպերացիալից, միմիայն կոռպերացիալից, վոր մենք առաջ քամահըռում երինք վորպես չարչեական կոռպերացիա, և վորը վորոշ տեսակետից իրավունք ունենք քամահըռելու այժմ՝ նեպի պայմաններում նույնպես,—միթե այս բոլոր անհամենա չե միակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար: Այս գեռևս սոցիալիստական հասարակության կառուցում չե, բայց ոտ այն ամենն ե, ինչ անհրաժեշտ ե և բավական այդ կառուցման համար» (տե՛ս Հ. XXVII, էջ 392):

Պարզ ե, վոր այսուղի չկա ու չի ել կարող լինել վոչ մի հսկմաձայնեցում: Ընկ. Տրոցկու «պերմանենտ» հեղափոխությունը» բացասումն ե պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի, և ընդհակարակ—պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիան բացասումն ե «պերմանենտ» հեղափոխության» թեորիայի:

Մեր հեղափոխության ուժերին ու ընդունակություններին չհավատալը, ոռուսաստանյան պրոլետարիատի ուժերին ու ընդունակություններին չհավատալը—այս ե «պերմանենտ հեղափոխության» թեորիայի յենթահողը (ողջության):

Մինչև այժմ սովորաբար նշում եյին «պերմանենտ հեղափոխության» թեորիայի մի կողմը—գյուղացիական շարժման հեղափոխական հնարավորություններին չհավատալը: Այժմ, արդարացի լինելու համար, այդ կողմն անհրաժեշտ է լրացնել մյուս կողմով—Ռուսաստանի պրոլետարիատի ուժերին ու ընդունակություններին չհավատալով:

Ի՞նչո՞վ ե տարբերվում ընկ. Տրոցկու թեորիան մենչելիզմի սովորական թեորիայից այն մասին, թե սոցիալիզմի հաղթությունը մի յերկրում, այն ել հետամնաց յերկրում, անհնարին ե առանց պրոլետարական հեղափոխության նախապես հաղթելուն «Արևմայան Յեվրոպայի հիմնական յերկներում»:

Հստ Եյության՝ վոչնչով:

Տարակույսներն անհնարին են: Ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» թեորիան մենչելիզմի այլառեսակությունն ե:

Վերջին ժամանակներս մեր մամուլում յերևան են յեկել վտած դիվանագետներ, վորոնք ջանում են «պերմանենտ հեղափոխության» թեորիան անցկացնել վորպես լենինիզմի հետ համատեղելի ինչ-վոր մի բան: Իհարկե, ասում են նրանք, այդ թեորիան անսկսոք դուրս յեկալ 1905 թվականին: Բայց ընկ. Տրոցկու սիալն այն ե, վոր նա այն ժամանակ առաջ եր վագել, վորձելով 1905 թվականի իրադրության նկատ-

մամբ կիրառել այն, ինչ վոր այն ժամանակ չեր կարելի կիրառել:

Բայց հետազայում, ասում են նրանք, որինակ՝ 1917 թվականի հոկտեմբերին, յերբ հեղափոխությունը կարողացել եր լիովին հասունանալ, ընկ. Տրոցկութեորիան իրը թե միանգամբայն իր տեղում դուրս յեկավ: Դժվար չե կուհել, վոր այդ դիվանագետներից ամենագլխավորն ընկ. Ռադեկն ե: Զե՞ք հաճի արդյոք ունկնդրել.

«Պատերազմն անդունդ փորեց հող նվաճելու ու հաշուության ձգուղ գյուղացիության և մանր-բուրժուական կտսակցությունների միջև. պատերազմը գյուղացիությունը հանձնեց բանվոր դասակարգի և նրա ավանդարդի՝ բոլշևիկների կուսակցության գեկավարությանը: Հնարավոր դարձավ վո՛չ թե բանվոր դասակարգի ու գյուղացիության զիկուսատուրան, այլ գյուղացիության վրա հենվող բանվոր դասակարգի զիկուսատուրան: Այն, ինչ վոր Ռուսական կուսակցությունը ու Տրոցկին 1905 թվականին առաջարկում եյին լենինի գեմ (այսինքն «պերմանենտ հեղափոխությունը»: Ի. Ստ.՝), իրականում պատմական զարգացման յերկրորդ ետապ դուրս յեկավ» (տե՛ս «Правда» 1924 թ. փետրվարի 21, № 42):

Այստեղ յուրաքանչյուր խոսքը խարդախումն ե:

Ճիշտ չե, թե պատերազմի ժամանակ «հնարավոր դարձավ վո՛չ թե բանվոր դասակարգի ու գյուղացիության զիկուսատուրան, այլ գյուղացիության վրա հենվող բանվոր դասակարգի զիկուսատուրան»: Իրապես 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունն եր պրոլետարիատի ու գյուղացիության զիկուսատուրայի իրականացումը, վոր յուրատեսակ կերպով միացյալ վագած եր բուրժուազիայի դիկտատուրայի հետ:

Ճիշտ չե, թե «պերմանենտ հեղափոխության»

թեորիան, վորի մասին ընկ. Ռադեկն ամոթիսածությամբ լուսմ է, 1905 թ. Ռողա Լուքսեմբուրգն ու Տրոցկին են առաջադրել: Իրավես այդ թեորիան առաջարել եյին Պարվուսն ու Տրոցկին: Այժմ տասն տարիս անց, ընկ. Ռադեկն ուղղում է իրեն՝ հարկավոր համարելով՝ հայհոյել Պարվուսին «պերմանենտ հեղափոխության» համար (տե՛ս նրա Հոդվածը՝ Պարվուսի մասին «Պրավդա»-յում): Բայց արդարությունը պահանջում է ընկ. Ռադեկից, վոր հայհոյանքի յենթարկի նաև Պարվուսի կոմպանիոնը՝ ընկ. Տրոցկին:

Ճիշտ չե, թե 1905 թվի հեղափոխության կողմից դեն չըրտված «պերմանենտ հեղափոխությունը» ուղղությունը յեկավ «պատմական զարգացման յերկրորդ ետքում» այսինքն Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ: Հոկտեմբերյան հեղափոխության ամբողջ ընթացքը, նրա ամբողջ զարգացումը ցույց տվին, ապացուցեցին «պերմանենտ հեղափոխության» թեորիայի լիակատար սեանկությունը, նրա լիակատար անհամառեղելիությունը լենինիզմի հիմունքների հետ:

Քաղցրիկ ճառերով ու վատած դիվանադիտությամբ չես ծածկի այն լայներակ անդունուը, վոր ընկած ե «պերմանենտ հեղափոխության» թեորիայի և լենինիզմի միջն:

III

ԲՈԼԵՎԻԿՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՄԻՔԱՆԻ ԱՌԱՆՉԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽԱԳԱՐԱՎԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՈՒՄ

Վորպեսպի հասկանանք բոլեկիկների՝ Հոկտեմբերի նախագարաւաստման ժամանակաշրջանի տակտի-

կան, անհրաժեշտ ե, վոր պարզենք մեզ համար այդ տակտիկայի գոնե միքանի առանձնապես կարեոր առանձնահատկությունները: Այդ առավել ևս անհրաժեշտ ե այն պատճառով, վոր բոլեկիկների տակտիկային վերաբերող բազմաթիվ բրոցյուրներում հաճախ շրջանցվում են հենց այդ առանձնահատկությունները:

Այդ ի՞նչ առանձնահատկություններ են:

Առաջին առանձնահատկություններ: Յեթե լսես ընկ. Տրոցկուն, կարելի յէ կարծել, թե Հոկտեմբերի նախապատրաստման պատմությունն ունի ընդամենը յերկու ժամանակաշրջան—հետախուզության ժամանակաշրջան, իսկ ինչ դրանից ավելի յէ, այն ի չարեն ե: Ի՞նչ բան ե 1917 թվի ապրիլյան մանկֆեստացիան: յ«Ապրիլյան մանկֆեստացիան, վորն ավելի «ձախ» ընթացավ, քան հարկն եր, մի հետախուզական արտելք եր՝ ստուգելու համար մասսաների տրամադրությունն ու փոխհարաբերությունները նրանց ու խորհրդային մեծամասնության միջն» (տե՛ս ընկ. Տրոցկու յերկերի հ. III, մ. 1, եջ XXVII): Իսկ ի՞նչ բան ե 1917 թ. հունիսյան ցույցը: Ընկ. Տրոցկու կարծիքով՝ «ըստ եյության այս անդամ ել գործը հանդեց նոր ավելի լայն հետախուզության՝ շարժման նոր, ավելի բարձր ետապում» (տե՛ս նույն տեղը, եջ XXVII): Ի՞նչ ասել կուղի, վոր 1917 թվի հունիսյան ցույցը, վոր սարքեց մեր կուսակցության պահանջով, ըստ ընկ. Տրոցկու պատկերացման՝ առավել ևս պետք ե «հետախուզություն» կոչվի:

Այսպիսով՝ դուրս ե դալիս, վոր բոլեկիկներին

